ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՆՈՐԱՇԵՆԻ ՎԱՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄՐՈՑԸ

Վերջին տարիներին ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական ջոկատը պատմ. գիտ. թեկնածու Ս. Ա. Եսայանի ղեկավարությամբ ուսումնասիրում է ՀՍՍՀ հյուսիս-արևելյան շրջանների հնագիտական հուշարձանները։ Միայն Շամշադինի շրջանի բրոնզի և երկաթի դարաշրջանների հուշարձանների ուսումնասիրության ժամանակ հայտնաբերվել ու պեղվել են տասից ավելի կիկլոպյան ամրոցներ։ Դրանց թվում է 1970 թ. պեղված ամրոց-բնակավայրը, որ գտնվում է Շամշադինի շրջանի Նորաշեն գյուղից 5 կիլոմետր հարավ-արևմուտք, գյուղից ամառանոց տանող Ճանապարհի ձախ կողմում[1]։

Այն տեղավորված է ժայռոտ բլրի վրա, ամրացված երկշարք պարիսպներով, որոնք կրկնում են բլուրի ընդհանուր ձևերը։ Պարբսպապատը, որն ունի մինչև 3 մ հաստություն, շարված է մեծածավալ քարերից։ Բնակավայրի գրաված տարածությունը մոտավորապես 1,5 հեկտար է և այժմ ծածկված է խիտ անտառով և ճիմահողով, որը դժվարացնում է ամրոցի ուսումնասիրությունը։ Նշված տարածությունից հնարավոր է եղել պեղել 500 քառ. մետր, չորս հետախուզահորերի (շուրֆերի) ձևով։ Երեք հետախուզահորերում բացվել են պատերի շարվածքներ։ Առաջին հետախուզահորում բացվել են երկու զուգահեռ պատեր, իրարից 5 մ հեռավորությամբ, 1,2—1,4 մ լայնքով, 1,5—2,5 մ երկարությամբ, տեղ-տեղ 0,4—0,7 մ բարձրությամբ։ Սակայն այս տվյալները հնարավորություն չեն տալիս որոշելու շինության ինչ լինելը։ Մյուս հետախուզահորերում բացված շարվածքները ավելի վատ են պահպանված։

Նյութական մշակույթի շերտը (0,7 մ հաստությամբ) ընկած է այս պատերին կից, անմիջապես ժայռի վրա։ Չնայած այս ոչ մեծ խորությանը, շերտը հարուստ է խեցեղենով, մետաղյա զենքերով ու գործիքներով, զարդերով, քարե և ոսկրե իրերով։

Քանի որ չորս հետախուզահորերի նյութերը ամբողջապես նույնատիպ են և վերաբերում են միևնույն ժամանակաշրջանին, ուստի նրանք քննարկվում են միասին և ըստ տեսակների։

Խեցեգործական արտադրանքը ներկայացված է խիստ բեկորային վիճակում, ամբողջացող միայն մեկ սափորիկ կա։ Սակայն գտնված անոթների շուրթերի, պսակների, հատակների համեմատությունը նույն ժամանակաշրջանով թվագրվող հայտնի նյութերի հետ, հնարավորություն է տալիս վերականգնել դրանց ձևերը և խմբավորել։ Այդ ձևերը բազմազան են՝ կան կարասներ, կճուճներ, սափորներ, քրեղաններ, ըմպանակներ, ձձումներ և այլն։

Կարասների բերանների բացվածքները լայն են (տրամ. 0,20—0,40 սմ), իսկ նստուկները համեմատաբար փոքր (տրամագիծը մինչև 20 սմ), բոլորն էլ պատրաստված են թրծումից գորշ-շագանակագույն կամ կարմիր-աղյուսագույն դարձած ավազախառն կավից։ Խեցին կոպիտ է, թրծումը անհավասար։ Բեկորների հաստությունը 14—16 սմ է։ Բոլոր կարասները որպես կանոն ուսերին կամ իրանի լայն մասում կրում են հում կավի վրա հատուկ սանրաձև հարմարանքով արված բազմաշարք, ուղիղ, ալիքաձև և ուռուցիկ գոտիների ձևով զարդանախշ։ Ուռուցիկ գոտիներն էլ իրենց հերթին զարդարված են շեղ, միմյանց զուգահեռ ակոսներով, ձվածիր փոսիկներով և եղունգով արված նախշերով (տախտ. I, 1, 2, 3)։ Ըստ չափերի և պսակների ձևավորման առանձնանում են կարասների չորս տարբերակներ։ Մի տարբերակի կարասներն ունեն մեծ չափեր, ձևավոր պսակներ, կարճ վզեր և աստիճանաբար լայնացող ուսեր (տախտ. I, 5)։ Հարդագոտիները տեղադրված են նրանց ուսերին և իրանի ամենալայն մասում։ Մյուսի պսակները պարզ են՝ շուրթերը դուրս են հակված կլորավուն թմբիկով (տախտ. I, 7)։ Երրորդ տարբերակի կարասները (տախտ. I, 6) բոլորովին զուրկ են վզի մասից, և թմբիկավոր շուրթը, որը որոշ դեպքերում կախված է կարասի արտաքին մակերեսի վրա, ուղղակի նստած է իրանի պատին։ Հարդագոտին սկսվում է շուրթի տակից և դատելով պահպանված բեկորներից, շարունակվում է մինչև կարասի կեսը։ Չորրորդը

---

1 Նորաշենի ամրոցի նյութերը Ս. Ա. Եսայանի կողմից սիրալիր կերպով տրամադրվել են մեզ ուսումնասիրման և հրատարակման իրավունքով, որի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում։



Տախտակ I

(տախտ. I, 4) ունի իրանի արտաքին մակերեսի վրա շուռ եկած տարբեր չափերի տափակավուն շուրթ և սեղանաձև կանթեր՝ հարդարված երկու կամ չորս խոր ակոսներով։ Այս կարասները կրում են նաև փայլեցման հետքեր։ Կարասների բոլոր տարբերակները իրենց մերձավոր զուգահեռներն ունեն Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների ամրոցների համալիրներում. ինչպես նաև Հայաստանի մյուս հուշարձանների VI—III դդ. թվագրվող նյութերի մեջ (Արին-բերդ, Խրտանոց, Արմավիր, Գառնի)։ Դրանք հիմնականում տեղական ավանդույթներով զարգացող խեցեղենի անբաժան մասն են կազմում և հանդիպում են ուրարտական ժամանակներից սկսած մինչև մ.թ.ա. առաջին դարերը։ Կախեթիայից, ինչպես նաև Շոշի աքեմենյան բնակավայրի առաջին հորիզոնից հայտնաբերված նույնատիպ կարասները ևս թվագրվում են այս դարերով[2]։

Խեցեղենի հաջորդ խումբը կերակուրների պատրաստման և սննդամթերքների պահպանման համար օգտագործվող կճուճներն են։ Սրանք սև, գորշ և գորշա-շագանակագույն ավազախառն կավից պատրաստած, սովորաբար միանման տնկանթ անոթներ են, որոնց ուրվագիծը հստակ չէ։ Շուրթերը դուրս են թեքված (տրամ. 16—25 սմ), վզերը կարճ են, ուսերը թեք, իրանները՝ գնդաձև և նստուկները՝ տափակ։ Իրարից տարբերվում են հարդարմամբ։ Մի մասը կրկնում է կարասների երրորդ տարբերակի զարդամոտիվները (տախ. I, 10)։ Մյուս կճուճները շուրթի կամ ուսերի վրա կրում են արևածաղկի սերմի նման կամ բազմաշարք ալիքաձև նախշեր (տախտ. I, 8, 9)։ Կճուճների ընդհանուր ձևից մի փոքր տարբերվում են երկու նմուշ։ Առաջինը միջին չափերի կճուճ է, մի փոքր դուրս ցցված սուր շուրթով, երկկոնաձև իրանով։ Երկրորդը ունի փոքրիկ, դուրս հակված թմբիկով շուրթ, կարճ, բայց ներմկված վիզ և գնդաձև իրան։ Վզի անցումը իրանին ընդգծված է, տեխնիկական մի հնար, որ շատ բնորոշ է ուրարտական սափորներին ու կճուճներին։ Նորաշենի այս նմուշը և Արմավիրից մի քանիսի առկայությունը թույլ է տալիս ասելու, որ այդ հնարը VI—IV դդ. խեցեղենը ժառանգել է ուրարտականից։

Քննարկվող կճուճները լայն կիրառություն են ունեցել I հազարամյակի սկզբներից մինչև մեր թվականության առաջին դարերը և չնչին փոփոխություններով հարատևել են մինչև միջին դարերը։ Այս կճուճների տարածման շրջանակները ևս շատ մեծ են. դրանք լայնորեն հայտնի են Թրիալեթիի, Մինգեչաուրի, Անդրկովկասի, Իրանի և առաջավոր Ասիայի շատ հնավայրերից։

Առավել բեկորային վիճակում է սափորների խումբը։ Հայտնաբերվել են նրանց պսակների բեկորներ դեպի վեր լայնացող շուրթերով, որոնցից սկսվում են կանթերը և աղեղնաձև իջնելով հանգչում են իրանի ամենալայն, ուռուցիկ մասի վրա։ Մեծ է հատկապես կանթերի քանակը։ Հանդիպում են սև, գորշ-շագանակագույն և կարմիր երանգների կանթեր, մեծ մասը զարդարված մեկ կամ երկշարք, շեղ շարված, ձվաձև փոսիկներով։ Կանթերի մի խումբն ունի ուղղահայաց ճեղք, լցված աստիճանաձև իրար ագուցված եռանկյուններով։ Թե՛ առաջին և թե՛ երկրորդ զարդանախշման հնարը, ինչպես բազմիցս նշվել է գրականության մեջ. լայնորեն կիրառվել է մ. թ. ա. VII—IV դդ. թվագրվող սափորների հարդարման համար։ Կանթերի մեկ այլ խումբը հարդարված է վերադիր կոճականման զարդերով, որոնք մետաղյա անոթների գամերի կրկնօրինակումն են։ Կան խոյի ոճավորված գլխի նմանվող ելուստ ունեցող կանթեր։ Այս երկու հնարները ևս ավանդորեն գալիս են հնից, շատ մեծ կիրառություն են գտնում VII—VI դդ. խեցեղենի հարդարման տեխնիկայում, իսկ հետագա դարերում հանդիպում են վերապրուկային ձևով։ Սափորների իրանի բեկորներից քննության է արժանի դեղնավուն քսուկով պատած անփայլ սափորի՝ վզից իրանին անցնող բեկորը, զարդարված շեղ փոսիկներով. այս սափորի ամբողջական օրինակը կա Բերդի դամբարանադաշտի մ. թ. ա. V—VI դդ. թվագրված նյութերի մեջ։ Նորաշենի սափորների այս խումբը իր մաերամասներով մերձենում է Ջրառատից, Կարմիր-բլուրի դամբարանադաշտից, Աթարբեկյանից, Շամշագինի, Իջևանի, Նոյեմբերյանի հուշարձաններից հայտնի խիստ բնորոշ սափորներին և կարող է թվագրվել VI—IV դդ.[3]։

Առանձին ենթախումբ են կազմում մի կանթանի, երկկոնաձև սափորիկները, ոչ բարձր

---

2 Մ. Իսրայելյան, Էրեբունի բերդքաղաքի պատմությունը, Երևան, 1970, աղ. 36։ «Հնագիտական իրերի կատալոգ» (Երևան քաղ. թանգարանի), մաս 2, 1967, աղ. 23։ Б. А. Куфтин, Материалы к археологии Колхиды, том I, Тбилиси, 1941, էջ 17։ R. Ghirshman, Village Perse-Achemenide, Paris. 1954, տախտակ $XV_{8,\ 12,\ 13}$, XVII_{7}։

3 А. О. Мнацаканян, Г. А. Тирацян, Новые данные о материальной культуре древней Армении, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1961, № 8, աղ. 3։ С. А. Есаян, Археологические находки близ поселка Иджеван, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր»,



Տախտակ II

(8—9 սմ) իրանով, հատակի և շուրթի հավասար տրամագծով (3,5 սմ), բոլորն էլ պատրաստված են թրծումից գորշ-շագանակագույն դարձած մանրահատիկ կավից։ Նրանք իրարից տարբերվում են միայն հարդարման տարրերով։ Ամբողջական պահպանված միակ սափորիկը հարթեցված մակերեսի վրա կրում է փայլեցումով արված ուղղահայաց գոտիներ։ Մյուսի (ՊՊԹ, 2448/56) վերին մասը զարդարված է հորիզոնական ուռուցիկ գոտիներով, իսկ երրորդի (ՊՊԹ, 2558/55) նշված ուռուցիկ գոտիներից հեռանում են սուր դագաթներով ցած ուղղված վերադիր եռանկյունիներ (տախտ. II, 57)։ Այս ենթախումբը ևս, բացառությամբ ինքնատիպ զարդանկարի, ուրվանկարով և առանձին տարրերով նույնանում է վերոհիշյալ հուշարձաններից լավ հայտնի սափորիկների հետ։

Քանակի և տեսակների առատությամբ հատկապես աչքի են ընկնում թաս-քրեղանները, որոնք ըստ պսակների ու կողերի ձևավորման բաժանվում են հինգ ենթախմբի։ Մի մասի շուրթը հարթ կտրված է և թեթև հակված անոթի ներքին մակերեսի վրա (տրամ. 15—22 սմ)։ Թաս-քրեղանները, բացառությամբ մեկի, կանթեր չունեն (տախտ. II, 8)։ Մյուսների հարթ կտրված շուրթը հակված է թե՛ դեպի ներս, թե՛ դեպի դուրս, շուրթի վրա որոշ դեպքերում ունենալով ակոսիկներ (տախտ. II, 9)։ Մյուս դեպքերում շուրթի տակ դրսից առկա է թեթև ներճկում, նման Արմավիրից, Արտաշատից հայտնի, ներսից ճառագայթաձև զարդ կրող թասերի պրոֆիլներին։ Երրորդ տեսակը Աթարբեկյանից, Ջրառատից, Արմավիրից, Արտաշատից, Գառնիից լայնորեն հայտնի կլորավուն, թեթևակի ներս հակված շուրթերով, հարթ հատակով թասերն են (տախտ. II, 4)։ Արմավիրի և Գառնիի օրինակները ունեն հասարակ և գունազարդ տարբերակներ ևս։ VIII—VII դդ. ավանդորեն եկող և միայն մշակման ու հարդարման տարրերի չնչին փոփոխություններով հետագա դարերում գոյատևող քթիկ-ծորակավոր քրեղանների կողքին առատորեն հանդես են գալիս խիստ պրոֆիլավորված բարձր կողերով և հարթ նստուկով քրեղանները (տախտ. II, 13)։ Ոչ բարձր կողերով այս քրեղանները հայտնի էին ուրարտական հուշարձաններից և ուրարտական խեցեգործությանը բնորոշ ձև էին համարվում։ Հետագայում Արմավիրի և Գառնիի, ապա Նորաշենի ու մյուս համալիրներում նրանց հանդես գալը հնարավորություն է ընձեռում ասելու, որ այս թասերը, առաջանալով մ. թ. ա. VIII—VII դդ., շարունակում են իրենց անընդմեջ գոյությունը հետագա դարերում, տարբերվելով միայն խեցու մշակվածությամբ, թրծման վիճակով և արտաքին հարդարմամբ[4]։

Նորաշենում գտնվել է լայնաշուրթ (տրամ. 20 սմ) և համարյա շուրթի տրամագծին հավասար նստուկով, ցածր կողով (3—5 սմ) մի թաղար-տապակարան, որը պատրաստված է դեղնա-օխրայավուն մանրահատիկ կավից. ունի փայլեցրած, շուրթը զարդարված ակոսիկներ (տախտ. II, 12)։ Գտնվել են նաև ձձումների գորշ և սև բեկորներ, որոնք ներսից կրում են տարբեր ուղղության բազմաշարք ղուգահեռ ակոսներ և փոքրիկ սուր ելուստներ։ Կաթնատնտեսության համար խիստ կարևոր խեցեղենի այս ձևը լայն տարածում է ստանում բրոնզի դարի վերջից և գոյատևում մինչև առաջին դարերը։

Նորաշենի խեցեղենի վերջին խումբը ըմպանակ-փիալաներն են, բնորոշ կիսագնդաձև իրանով, ներճկված բարձր կողով, նստուկները հարթ կամ փոսիկավոր։ Վաղ հայկական և հելլենիստական դարաշրջանի խեցեգործության այս ամենաբնորոշ տեսակը, գտնված թե՛ դամբարանային, թե՛ բնակավայրային հուշարձաններից (Ջրառատ, Ցամաքաբերդ, Կարմիր բլուր, Գառնի, Բերդ, Արմավիր, Արգիշտիխինիլի, Ջուջևան և այլուր)[5] Նորաշենում հանդես է գալիս մի առանձնահատկությամբ՝ ելուստ կանթի ձևով, գրված պսակի և իրանի միացման տեղում, որը, ինչպես երևում է Ս. Ա. Եսայանի ուսումնասիրություններից, առայժմ բնորոշ է Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների հուշարձաններից գտնված ըմպանակներին[6]։

Ըմպանակները հանդես են գալիս մ. թ. ա. VIII—VII դդ., սկզբում մետաղից, ապա կա-

---

(Հաս. դիտ.), 1961, № 4, նկ. 3, 4։ Նույնի՝ Астхиблурский могильник, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (Հաս. դիտ.), 1968, № 6, աղ. III, 2, 9, աղ. V, 14, 15, 16։ Նույնի՝ Могильник раннеармянского времени в поселке Берд Шамшадинского района, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, աղ. I, 7։

4 Б. Н. Аракелян, Результаты изучения древнего Армавира, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, աղ. I։

5 Г. А. Тирацян, Урарту и Армения, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (Հաս. գիտ.), 1968, № 2, էջ 17—18, Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանի մ. թ. ա. VII—I դարերի խեցեգործության բնորոշ մի ձև, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 2, էջ 270, տախտ. I։

6 Տե՛ս Ս. Ս. Ջիլինգարյան, Վաղ հայկական հուշարձաններ Ջուջևանի դամբարանադաշտում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (Հաս. գիտ.), 1971, № 2, տախտ. II, 2։ С. А. Есаян.



Տախտակ III

վից, նաև ապակուց, սակայն սրանք մասսայական ու բնորոշ են դառնում VI—V դդ. ու հարատևում են մինչև առաջին դարերը։ Նրանց առկայությունը Նորաշենի համալիրում թույլ է տալիս ճշգրտելու ամրոցի գոյատևման ժամանակագրական սահմանները։

Նորաշենի խեցեղենը պատրաստված է դըլխավորապես դրդի վրա, լավ մանրած, մշակված կավից։ Թեև ունի աղյուսագույն, բաց և մուգ շագանակագույն նմուշներ, հիմնականում գորշավուն է, որը արդյունք է ոչ թե անբավարար թրծման, ինչպես խոհանոցային խեցեղենն է երբեմն լինում, այլ կավի մեջ եղած խառնուրդների և թրծման հատուկ մեթոդի, քանի որ գորշավուն խեցեղենը որակով չի զիջում մյուս տեսակներին։

Այսպիսով, Նորաշենի խեցեղենի քննարկումը ցույց է տալիս, որ այն բազմազան է ինչպես ընդհանուր ձևերով, նույնպես և հարդարման եղանակներով. դա հետևանք է խեցեղենի հին տեսակների կողքին նորերի առաջացման և հարդարման ու ձևավորման նոր տարրեր ձեռք բերելուն։

Այս նույն երևույթին ենք հանդիպում նաև մետաղագործական արտադրանքի քննության ժամանակ։ Ամենամեծ խումբը կազմում են զենքերը, պատրաստված բրոնզից, երկաթից, ոսկրից։ Քսան նետասլաքներից վեցը ուշ բրոնզի շրջանից եկող տափակ սուր ծայրերով, քառակող կամ տափակ պոչուկ ունեցող նետասլաքներն են, որոնք պատրաստվում էին բրոնզե թերթիկը կտրելու, կռելու և հեսանելու տեխնիկայով (տախտ. III, 12, 13)։ Դրանց կողքին հանդես են գալիս նոր տեսակներ։ Առաջինը երկարուկ, կտրվածքում ձվաձև կամ ռոմբաձև, տերևաձև շեղբով նետասլաքներն են, որոնք ունեն ոչ մեծ խնձորակ և նրանից ելնող կարճ կլոր պոչ (տախտ. III, 20, 21)։ Այս նետասլաքներից շատ չեն գտնված։ Հանդիպում են Աստղիբլուրի, Արին բերդի, Արգիշտիխինիլիի նյութերի մեջ և թվագրվում են մ. թ. ա. VII—V դդ.[7]։

Երկրորդ տեսակը տարբեր չափեր ունեցող երկթև (երկ. 3,5—4,5 սմ) և եռանիստ (2,5—3,8 սմ), սկյութական կոչված նետասլաքներն են, որոնց մի մասն ունի կոթառից իջնող փշիկ (տախտ. III, 15, 16, 19)։ Մ. թ. ա. VI—V դդ. թվագրվող հուշարձանների համար բնորոշ այս նետասլաքների առկայությունը Նորաշենի համալիրում օգնում է ճշգրտելու ամրոցի թվագրումը։

Նետասլաքների մեջ կան 2 ոսկրե եռանիստ, երկարավուն նետասլաքներ, կարճ կլոր պոչուկով (երկ. 13 սմ)։ Շեղբի ստորին մասում նրանք ունեն ոչ մեծ եռանկյունաձև կտրվածք։ Մեկը զարդարված է կենտրոնում խոր փոսիկներ ունեցող երկու փորագիր օղակներով (տախտ. III, 8, 9)։ Նրանց վաղ տեսակները հայտնի են երկրորդ հազարամյակի վերջերից, առաջին հազարամյակի սկզբներից ու հարատևում են մինչև մ. թ. ա. VI—V դդ. և գտնվել են Կամոյում, Ստեփանավանում, Բեշտաշենում, Մինգեչաուրում և այլուր[8]։ Հավանաբար սրանք օգտագործվում էին առավելապես որսորդության և ծիսական արարողության ժամանակ։

Զենքերի հաջորդ խումբը ներկայացված է երկաթյա նիզակներով (թվով 11 հատ)՝ ամրողջական և բեկորային վիճակում։ Նրանք ձևի տեսակետից բաժանվում են երկու ենթախմբի։ Առաջին ենթախմբի նիզակներ (Երկ.՝ 20,5—28,5 սմ) եռանկյունաձև շեղբով են, պարզ արտահայտված միջնաջիղով և խողովակաձև կոթառներով, որոնց մի մասը փայտյա կոթին ամրացնելու համար անցքեր ունի (տախտ. III, 1, 2, 3), իսկ երկրորդ խմբի նիզակները տերևաձև կտրվածքում տափակ կամ թեթև օվալաձև շեղբ ունեն, երբեմն՝ թույլ արտահայտված միջնաջիղ (տախտ. III, 4, 6)։ Այս բաժանումը կատարված է ըստ նիզակների ձևի, քանի որ երկու ենթախմբերն էլ ունեն թե՛ մեծ, թե՛ փոքր տեսակներ։ Երկու ենթախումբն էլ իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն Ջրառատի, Աթարբեկյանի. Ակների, Բերդի, Բեշտաշենի, Մինգեչաուրի, Պերսեպոլսի և VI—IV դդ. այլ համալիրներում։ Նիզակների այս ձևերը նոր չեն, այլ հանդիսանում են մ. թ. ա. VII—VI դդ. թվագրվող (հատկապես Լալվարի և Խրտանոցի) նիզակների օրգանական շարունակությունը[9]։

Ոչ մեծ (7,5—9 սմ) երկարություն ունեցող տեգերի շեղբերը կազմում են զենքերի երրորդ

Могильник раннеармянского времени..., «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, աղ. I, 1—6։

[7] А. А. Мартиросян, Раскопки Аргиштихинили, СА, 1967, № 4, նկ. 6։ «Հնագիտական իրերի կատալոգ», մաս 2, աղ. 27/ա։

[8] Б. А. Куфтин, Раскопки в Триалети, Тбилиси, 1941, էջ 76, նկ. 86/б, 1, 4.

[9] А. А. Мартиросян, Раскопки в Головино, Ереван, 1954, աղ. 10; Л. О. Мнацаканян, Г. А. Тирацян, նշվ. աշխ., էջ 70, աղ. I; Б. А. Куфтин, Раскопки в Триалети, էջ 45, նկ. 43; С. Н. Казиев, О некоторых типах оружия из Мингечаура, «Материальная культура Азербайджана», հատ. 2, էջ 29, աղ. 5; E. Schmidt, Persepolis, II, Chicago, 1957, տախտ. 76։



Տախտակ IV

խումբը։ Նրանցից մեկը կտրվածքում ռոմբաձև է, իսկ երկրորդը՝ հարթ, նշտարաձև շեղբով և առաջինի նման խողովակաձև։

Մետաղե իրերի մյուս կարևոր խումբը աշխատանքի գործիքներն են։ Այստեղ ևս, ինչպես վերը նշված հուշարձաններում, երկաթե դանակները հանդես են գալիս երկու տարբերակով. ա) միակողմանի կեռ սայրով, որի շարունակությունը կազմող դաստակը սայրից հետո անմիջապես նեղանում է, ապա աստիճանաբար լայնանալով վերածվում է կլորավուն գլխիկի։ Բոլորը իրենց վրա կրում են պահպանակը դաստակին ամրացնող գամեր (տախտ. III, 5, 10, 11), բ) միակողմանի, բայց ուղիղ սայրով դանակներ են, փոքր չափերի։ Դաստակը լեզվակաձև սայրի շարունակությունն է կազմում և բարակ ու երկար լինելով՝ ազուցվել է փայտյա կոթի մեջ։ Դանակների երկու տեսակներն էլ լայնորեն հայտնի են վերը նշված թե՛ տեղական, թե՛ ուրարտական հուշարձանների նյութերից, որից կարելի է եզրակացնել, որ հանդես գալով մ. թ. ա. IX դարում, օգտագործվելով հաջորդ դարերում, գոյատևել են մինչև առաջին դարերը, ինչպես ցույց են տալիս Դաոնիի՝ առաջին դարերով թվագրվող դամբարաններից գտնված նմուշները[10]։

Իրենց տեսակի մեջ եզակի են փոքր չափերի (երկ.՝ 6—9 սմ) երկաթյա երկսայր (սայրերի լայնքը 3 սմ) երկու կացինները (տախտ. IV, 1, 2), որոնցից մեկը տափակ է, կենտրոնական մասում նեղացած, որից հեռանում են աստիճանաբար լայնացող աղեղնաձև բերանները։ Մյուսը նույնությամբ կրկնում է այս ձևը, միայն կենտրոնական մասում հաստացած է և կոթին ազուցանելու համար անցք ունի։ Մեզ չհաջողվեց մինչև այժմ հայտնի նյութական համալիրներից որևէ մեկում գտնել այս կացիններին նմանօրինակ զուգահեռներ։ Հազվագյուտ այս կացինները, դատելով նրանց չափերից, կարող են համարվել միայն պղնձյա կամ բրոնզյա զարդեր պատրաստող վարպետի գործիք։ Սրա օգտին է խոսում կացինների անմիջական հարևանությամբ գտնված զարդերի, բրոնզյա մանր առարկաների մեծ առատությունը։ Զարդագործի աշխատանքի գործիք են հավանաբար նաև բրոնզյա փոքրիկ կաղապարը (տախտ. IV, 20), 18 սմ երկարություն ունեցող բրոնզե ձողիկը և, վերջապես, երկու երկաթե (երկ.՝ 6,5 սմ) նրբունելիներ (տախտ. IV, 9)։ Վերջիններիս բրոնզյա օրինակները մեծ թվով գտնվել են Լալվարի, Խրտանոցի, Իջևանի, Շամշագինի, Նոյեմբերյանի վերը նշված դամբարաններից[11] և ընդհանրապես համարվում են հարդարանքի իր։

Մետաղյա արտադրանքի վերջին խումբը բրոնզյա, բազմատեսակ հարդարանքի առարկաներն են։ Մեծ խմբով հանդես են գալիս ապարանջաններն ու մատանիները, պատրաստված բարակ բրոնզյա լարից։ Ապարանջանները (13 հատ) գլխավորապես պարզ, օղակաձև, իրար վրա եկած և հեռացած ծայրերով են, միայն մեկ օրինակն է իր վրա կրում փորագիր պարանահյուս զարդ։ Մատանիները (25 հատ) հիմնականում հարթ և ատամնավոր են, իրար վրա եկած և հեռացած ծայրերով։ Բրոնզյա և երկաթյա շիգխերից (ֆիբուլա) չորսը հասարակ աղեղ են, միացրած ուղիղ ձողիկով, իսկ մյուս երեքի աղեղները լայնացված են, տափակեցված և զարդարված։ Շիգխերից մեկը ձուլածո է և զարդարված է երկու շարք ուղղանկյուն ելուստներով (տախտ. IV, 11, 12, 15)։ Այս շիգխերը հարում են Կոբանյան աղեղնաձև տեսակներին, սակայն բնորոշվում են բոլորովին հատուկ, դեկորատիվ զարդարված աղեղներով. սա հավանաբար կապված է շիգխերի տեղական երկարատև զարգացման հետ Կովկասում։ Նրանք հանդես են գալիս մ. թ. ա. X—IX դդ., սակայն գեղարվեստական այս ձևավորումը ստանում են մ. թ. ա. VI—V դդ., ինչպես վկայում են Մուսիյերիի, Խրտանոցի, Կուրթանի համալիրների նմուշները և կարող են որոշակի թվագրվող նյութ դառնալ։ Հինգ օրինակով են ներկայացված մանյակ-կախիկները, պատրաստված բրոնզե նուրբ թերթիկներից։ Երեքը կլոր են, երկուսը՝ տերևաձև։ Կլորների վրա բացված են չորսական անցքեր, մյուսների վրա ուղղահայաց կետագծերով ստեղծված են գծային ռիթմեր (տախտ. VI, 18, 21)։ Մեծ խումբ են կազմում տակառաձև, գնդաձև, գլանաձև տարբեր չափերի ուլունքները, պատրաստված ագատից, սարդիոնից. սպիտակ մածուկից և ապակուց։ Ինչպես զարդերը, այնպես էլ ուլունքները, վերը նշված բոլոր հուշարձաններից գտնված զարդերի և ուլունքների նման թվագրվում են մ. թ. ա. VII—IV դդ.։

Քարե արտադրանքը ևս բավական բազմազան է։ Մեծ թվով են ներկայացված սրաքարերը, կոկիչները, որոնք իրենց վրա կրում են երկարատև օգտագործման հետքեր (տախտ. IV, 3, 6, 7)։ Գտնվել են երկու բազալտե մակույկաձև աղորիքներ նույնպես օգտագործման հետ-

10 Տե՛ս վերը նշված գրականությունը, նաև՝ J. de Morgan, Mission Scientifique au Caucase, Paris, 1899, հատ. I, նկ. 121/4, 126։

11 Տե՛ս J. de Morgan, նշվ. աշխ., էջ 117, նկ. 86, 87; А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, 274, 107, 277.

քերով։ Եղակի է թեշիկի գլուխը, պատրաստված թրծված կավից, տափակ օղակի ձևով, կենտրոնական անցքով։ Ինչ-որ աշխատանքային պրոցեսի հետ է կապվում կարմիր ավազաքարից պատրաստված հաստավուն գլխով սեպաձև առարկան (երկ.՝ 12,5 սմ, լայն.՝ 4,5 սմ, տախտ. IV, 4)։ Գտնվել է նաև փոքրիկ, կանաչավուն քարե դրոշմ, ուղղանկյուն ձևի (4 սմ×2,5 սմ), որի երեսին փորագրված է ծառանման զարդանախշ, իսկ կողի վրա շրջանակ կարճ գծիկներով, օգտագործվել է հավանաբար կավե անոթները հարդարելու համար (տախտ. IV, 13)։

Նորաշենի համալիրի վերջին խումբը կազմում են արձանիկները։ Առաջինը դանակի դաստակ հիշեցնող թռչնագլուխ քարե իր է, ոչ մեծ ցցված կտուցով և կլոր, ուռուցիկ աչքերով (տախտ. IV, 17)։ Երկրորդ կավե արձանիկը պատկերում է ինչ-որ կենդանու հետնամասը։ Իրանը կլորավուն է, կարճ, լիքը ոտքերով և կարճ պոչով։ Քանդակը կատարված է անփույթ, գորշավուն ավազախառն կավից (տախտ. I, 16)։ Երրորդը բրոնզե ձուլածո արձանիկ է (երկ.՝ 4 սմ), որը պատկերում է սեռական ընդգծված հատկանիշներով, արջի դիմակով տղամարդու, լայն տարածված ոտքերով ու ձեռքերով, ինչ-որ արարողության պահին՝ ձախ ձեռքում ունենալով ոչ մեծ կլոր վահան, աջում՝ գնդաձև գուրզ (տախտ. IV, 14)։ Արձանիկը իր կատարման եղանակով և մեկնաբանությամբ սերտորեն կապվում է Նոյեմբերյանի շրջանի Այրում գյուղում և Աստղիբլուրի դամբարաններում գտնված, Լոռիի Կայծուն բերդի, Նոր-Բայազետի պաշտամունքային հրապարակների մանրակերտներում պատկերված արձանիկների հետ։ Նորաշենի գյուտը գալիս է հաստատելու Ս. Եսայանի այն կարծիքը, որ այդ արձանիկները բնորոշ են VI—V դդ. մշակույթին[12]։

Այսպիսով, նյութերի քննարկումը, տարբեր նիզակների, կեռ դանակների, բնորոշ խեցեղենի և հատկապես ըմպանակների և սկյութական նետասլարների առկայությունը և համապատասխան զուգահեռները հնարավորություն են ընձեռում Նորաշենի ամրոցը թվագրելու մ. թ. ա. VI—V դդ.։ Նյութերի բազմազանությունն ու առատությունը ցույց են տալիս, որ ամրոցը, չնայած իր ոչ մեծ մասշտաբներին, գոյատևման կարճ ժամանակաշրջանին, ապրել է բուռն գործարար կյանքով։ Բաղում կենդանական մնացորդները (մեծ մասամբ մանր եղջերավոր անասունների) և լեռնային տեղանքը հուշում են, որ ամրոցի բնակիչները զբաղվել են անասնապահությամբ, նրա մթերքների՝ կաթի (ձձումներ), բրդի (թեշիկի գլուխներ) մշակությամբ։ Աղորիքների, տրորիչների, կոկիչների, կարասների, հորերի առատությունն էլ շեշտում է նստակյաց հողագործության և այգեգործության առկայությունը։ Արհեստների զարգացման մասին են խոսում ոչ միայն գտնված բարձրորակ զենքերը, խեցեղենը, զարդերը, արձանիկները, այլև հենց արտադրության պրոցեսի հետ կապված առարկաների՝ կացինների, կաղապարի, նրբունելիների, քարե դրոշմի և այլնի հայտնաբերումը։ Եվ մեր աչքն ուրվագծվում է մ. թ. ա. VI—V դդ. ամրոց-բնակավայրի կենցաղի քիչ թե շատ ամբողջական պատկերը։

Նյութերի քննարկումը, մյուս կողմից, բացահայտում է, որ նրանք հանդես են բերում զարմանալի նմանություն Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջանների նույն դարերով թվագրվող հուշարձանների՝ Բերդի, Իջևանի, Աստղիբլուրի, Թմրադիրի, Ջուջևանի նյութերի հետ և հնարավորություն է տալիս խոսելու այդ շրջաններին բնորոշ տեղային մեկ ընդհանուր մշակույթի մասին։

Այս մշակույթը, իհարկե, առանձնացված, կտրված չէ Հայաստանի մյուս շրջանների մշակույթից. ընդհակառակը, այն սերտ կապեր է երևան բերում կենտրոնական և մյուս շրջանների՝ Կարմիր բլուրի վաղ հայկական դամբարանադաշտի, Ջրառատի, Աթարբեկյանի և նույնիսկ քաղաքային տիպի (Արինբերդ, Արմավիր) հուշարձանների նյութերի հետ։ Այս նմանությունները թերևս հետևանք են այն բանի, որ բոլոր նշված հուշարձանների մշակույթները զարգանում են մի կողմից նախորդ՝ երկաթի դարաշրջանի մշակույթի ավանդների հիման վրա, այնտեղ գտնելով իրենց արմատները, նախատիպերը, մյուս կողմից՝ ձեռք են բերում ձեվերի ու տեխնիկական հնարների նոր տարրեր։ Եվ չնայած արտաքին հարդարման որոշ տարբերություններին, այս մշակույթը հանդիսանում է վաղ հայկական ժամանակաշրջանի միասնական մշակույթի անբաժան մասը։

Նորաշենի ամրոցի և նման միաշերտ ամրոցների ուսումնասիրությունը խիստ կարևոր է և հնարավորություն է ընձեռում պարզաբանելու վաղ հայկական մշակույթի ակունքների և բնույթի հետ կապված բազմաթիվ մութ հարցեր։

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ.

---

12 С. А. Есаян, Бронзовые модели культовых площадок древней Армении, СА, 1971, № 1, էջ 205, նկ. 1, 2, 3։